ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐՈՒՄ
SPECIAL TOPIC: "TRUTH" IN PAUL'S WRITINGS

Այս տերմինի և դրա հետ կապ ունեցող ձևերի կիրառությունները Պողոսի կողմից սկիզբ են առնում դրա ՀԿ-յան համարժեքից՝ *emet,* որը նշանակում է վստահելի կամ հավատարիմ (BDB 53, տես՝ Հատուկ Թեմա. Հավատալը, վստահելը, հավատքը և հավատարմությունը ՀԿ-ում): Միջանկյալ սուրբգրային հրեական գրքերում այն կիրառվում էր ճշմարտության համար ի հակադրություն կեղծիքի՝ ստության: Հնարավոր է ամենասերտ համազորը լինի Մեռյալ Ծովի Գալարների «Գոհության օրհներգությունները», որտեղ այն գործածվում է հայտնված վարդապետությունների համար: Էսսեների համայնքի անդամները դարձան «ճշմարտության վկաներ»:

Պողոսն այս տերմինը կիրառում է որպես Հիսուս Քրիստոսի ավետարանը նկատի ունենալու կերպ՝

1. Հռոմեացիների 1:18,25, 2:8,20, 3:7, 15:8
2. 1 Կորնթացիների 13:6
3. 2 Կորնթացիների 4:2, 6:7, 11:10, 13:8
4. Գաղատացիների 2:5,14, 5:7
5. Եփեսացիների 1:13, 6:14
6. Կողոսացիների 1:5,6
7. 2 Թեսաղոնիկեցիների 2:10,12,13
8. 1 Տիմոթեոս 2:4, 3:15, 4:3, 6:5
9. 2 Տիմոթեոս 2:15,18,25, 3:7,8, 4:4
10. Տիտոս 1:1,14

Պողոսն այս տերմինը նաև գործածում է իր խոսքը որպես վստահելի՝ ճիշտ արտահայտելու կերպ՝

1. Գործք 26:25
2. Հռոմեացիների 9:1
3. 2 Կորնթացիների 7:14, 12:6
4. Եփեսացիների 4:25
5. Փիլիպպեցիների 1:18
6. 1 Տիմոթեոս 2:7

Նա նաև գործածում է այս տերմինը, որպեսզի նկարագրի իր շարժառիթները 1 Կորնթ. 5:8-ում և ապրելակերպը (նաև բոլոր Քրիստոնյաների համար) Եփես. 4:24, 5:9, Փիլ. 4:8-ում: Երբեմն նա կիրառում է դա մարդկանց համար:

1. Աստված՝ Հռոմ. 3:4 (տես՝ Հովհ. 3:33, 17:17)
2. Հիսուս՝ Եփես. 4:21 (նման է Հովհ. 14:6-ին)
3. Առաքելական վկաներ՝ Տիտոս 1:13
4. Պողոսը, 2 Կորնթ. 6:8

Պողոսը օգտագործում է ԲԱՅԻ ձևը (այսինքն՝ *alētheuō*) միայն Գաղ. 4:16 և Եփես. 4:15-ում, որտեղ այն վերաբերում է ավետարանին: Ավելի շատ ուսումնասիրությունների համար կարդացե՛ք Քոլին Բրաունի (խմբ.), *Նոր Կտակարանի Աստվածաբանության Նոր Միջազգային Բառարան,* հատոր 3, էջ՝ 784-902 (Colin Brown, *The New International Dictionary of New Testament Theology*):